ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29-ը հունիսի 2011 թվականի թիվ44-Ա

<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն> փակ բաժնետիրական ընկերությունում ուսումնասիրություն կատարելու համար հանձնաժողով ստեղծելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին> թիվ 728 հրամանագրի 1.6. կետով և հաշվի առնելով Նոյեմբերյան քաղաքի բնակչուհի Սիլվա Մելիքսեթյանի դիմում-բողոքում բարձրացված հարցերը

Կ ա ր գ ա դ ր ում ե մ.

1. <Նոյեմբերյանի ԲԿ> ՓԲԸ-ում ուսումնասիրություն կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կարինե Դովլաթբեկյան – Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոց ապահովության վարչության պետ,
Ժորա Խաչատրյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կրտսեր մասնագետ,
Արևշատ Ղիասյան - <Իջևանի ԲԿ> ՓԲԸ-ի վերստուգող,
Աշխեն Ավետիսյան - <Աչաջրի ԱԿ> ՓԲԸ-ի վերստուգող,
Հերմինե Դավթյան - <Իջևանի ԱԱՊԿ> ՓԲԸ-ի վերստուգող:

2. Հանձնաժողովի նախագահին՝

5-օրյա ժամկետում <Նոյեմբերյանի ԲԿ> ՓԲԸ-ում կատարել ուսումնասիրություններ Ս. Մելիքսեթյանի դիմում-բողոքում նշված հարցերը իրականությանը համապատասխանելու և թույլ տրված ֆինանսական խախտումները հայտնաբերելու նպատակով:

3. Արդյունքները սահմանված ժամկետում ամփոփել և ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետին:
4. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. հունիսի 29
Քաղաք Իջևան